ՃԱ.

Նաև այս օրերս լուաք աստ, թէ մոսկոֆն ի ներքոյ օգոյու խորտակեալ զտաճիկս, իբրու 15 հազար տապաստ անկեալ, և այլք վիրաւորք բազումք, մնացեալքն ի փախուստ դարձեալ։ Նաև պօնավալի ուրացողի խորհրդականն, զոր ինչ ապստամբական գրեանք ի գլխաւորէ զօրավարէ սոցին գրեցեալք առ նա, առեալ զամենայն փախեալ և եկեալ ի Վիէնա առ կայսրն, և զմեծ պատիւ գտեալ է։ (Հ. Միքայէլ վ. Սեբաստացի առ Մխիթար, յամի 1738 յունվարի 4, ի պէլրդատու)։

ՃԲ.

Նաև լուայ զմահն յարութիւն եպիսկոպոսին, ըստ կարեացս յիշեմ ի պատարագս և ի յաղօթս. սա ութ օր յառաջ է վախճանեալ քան զքահֆայեցի ոհաննէս եպիսկոպոսն որ աստ, զորմէ ի 1 փետրվարի գրեցի։ Աստ մեռանօղք բազումք զոն, ևս առաւել ի մէջ զօրաց, լինի յաւուրն 20 և այլ աւելի. յորժամ ի դուրս ելանեմք, զչորս և զհինգ ի միասին տանին ի թաղել, և հիւանդութիւնք բազումք. երևի թէ անհուչակելի մահ գոյ աստ։ Նաև լուայ թէ ի գարնանս ունիք զդիտումն սկսման չինուածոյն։ (Հ. Միք. վ. Սեբաստացի առ Մխիթար, յամի 1738 փետր. ի 15, ի պէլրդատու)։

ՃԳ.

Կամէի տեղեկանալ, թէ արդեօք առեալք իցեն զտեղի ինչ ի Բատուա և թէ որովք կերպիւ. և քանի՞ անձինք և ո՞յք իցեն գնացեալք անդ։ (Հ. Թէոդորոս Յովանիսեան առ Հ. Միքայէլ վարդապետ, յամի 1738 մարտի 4, ի յԷլիզապէթպոլիս)։

ՃԴ.

Ի կողմանէ պատերազմին օր ըստ օրէ զօրանայ ահն տաճկին, ահա ի մօտակայս սորին աւար հարկանեն այրեն, սպանանեն, գերեն։ Ի Վարշէն սաֆերն փախեան ի ներքս. չորս և հինգ օր հեռի աստի ի կողմն պօսնայու, հերու զմի բերդակ առեալ են սոքա. այժմ, զնա ասեն ԹԴՌ տաճիկ պաշարեալ է. իսկ ի մէջն 300 անձինք սոցա կան. և ասեն կամ զայս պաշարելոց են, կամ զպուտիմ. այսր բազմադիմի զրոյցք զոն. լրտեսք բազումք. ևս առաւել աստ արգելեալ վաճառականն տաճկներն։ Ի սոցանէ երևելի գործ մի ոչ լսեցաք և ոչ տեսաք. այլ գատանայք սոցին զվեց և զեօթն տաճիկս բերին աստ. և բանք սոցին ապազայ է, այսինքն ասեն գալոց են բազում զօրք, այժմ աստ ներկայիս սակաւ. նաև ապրելիքն նուազ և թանկ... նաև աստի տունք ոմանք վասն երկիւղին սկսան ի ներքսագոյն քաղաքս չուել, ոչ ի հայոց։ (Հ. Միք. Սեբաստացի առ Մխիթար, 1738 մարտի 15, ի պէլրդատ)։

ՃԵ.

Ի գամբօյէն երկու օր է բարի լուր յաղթութեան մերայնոց զօրաց լուաք, բայց տկար էր, այսօր հաւաստերևս եղև, վասն այսորիկ զայս սակաւս գրեմ աւետալուրս, զի 50000 տաճիկք անկան ի սուր և ի ջուր, մերձ օսսովայու, և մերն 16000 անկեալք, մեծ մասն հեծեալք և կռանաթէոք նախ սակաւ մնացեր է թէ սոքա յաղթեալք լիցին, բայց յայլոյ ծայրէ մէկ փիրինչիփէ մի